Աշխեն Քեշիշյան

Այս հողը, որ հոսում է մեր ձեռքերի ափերից

Այս հողը, որ հոսում է մեր ձեռքերի ափերից

շարունակ,

այս հողը, որ հոսում է մեր ոտքերի տակից

անդադար,

երկինք է բարձրանում

սրբանում է,

լողում է

զուգահեռ աշխարհի է դառնում,

զուգահեռ աշխարհի է դառնում

մեր հիշողության:

Այս հողը, որ չենք կարողանում պահել,

որ չենք կարողանում կորցնել,

բուռ -բուռ տվեք

այնտեղ արյուն թափած

հերոսի մորը,

նա կհունցի

նշխար կսարքի

և մենք կուտենք նշխարն այդ

որպես փրկության

պատրանք:

Եվ կավարտվեն պատերազմները

հավիտյանս հավիտենից

և կավարտվեն պատերազմները...